

# Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես բազմ. 1922 էջ 223)

ԻԲ.

Նամակագիրս է Յարութիւն արքեպս. Լեւոնեան<sup>1</sup>: Իր այս ներկայ գիրը կարելի է անուանել ինքնակենսագրութեան մը հետաքրքրական մասը, ինչ որ պիտի ծառայէ մեզ քիչ մ'աւելի ծանօթանալու իր անձին շուրջ:

Պատուելագունեղ և գերարգելի Տեսակ Մխիթար արքայի  
և ածարանուրեսև վրդայի բազմաւ սիրով ողջոյն ի քս:

Յայտարարութիւն լիցի վերոյ գրեցեալ տեառնդ, որ այժմ ԻԱ ամիս եղև որ ի տեղոյս գատուեր եմ. բնաւ մին բան չի լուայ զորկենութենէ ձերմէ և տեղոյս. մին քանի անգամ սարգսին գրեցի ոչ մին պատասխանի չի ընկալայ: Նաև մատրիտ երկու ուխտաւոր պատահեցաւ մինն թօխաթցի և միւսն արգրումցի. թօխաթցուն մին գիր տուի ձեր հրամանոցն, չեմ գիտեր հասաւ թէ ոչ. յետ որոյ եկի կատիս մին գիր ևս գրեցի և մին երևանցի կու գնար ի ճէնուայ ետու նր և ասացի թէ Վէնէտիկու փոստն -գցէ, չեմ գիտեր հասաւ թէ ոչ: Մին քանի օրէն ետոյ սահակն եկաւ ալիգպօնայէն և ի միւսում աւուրն ելայ մին ֆրանսոցի նաւով դէպ լիզպօնայ: Ը օրն գնացինք, քամի չունէինք. և յորժամ հասինք ի տեղն, ներս չի թողին վս ահի մարսիլեաու մահին: Մնացի Ը օր ևս նաւի միջուժն. ետոյ հրաման եղև թէ ճանապարհորդքն ելանեն առանց քսրի: Նայն ելա(յ) մին պարքաով գնացի ի քաղաքն. և ի միւսում օրն արգուհալ տուի թագաւորին. հրաման տուաւ թէ եպսին պաւուլն միայն թող հանեն ի նազարէթն. և ի միւս կողմանէ նաւաւորին զօտ թէ ել գնայ: Մինչ մեք յորս ցամաքով և որ ծովով գնացինք, նաւն ելաւ գնաց. և ես մնացի միայն վերայիս շորեգոմի: Ետոյ մին մէժօտեալ տուի թագաւորին թէ ինձ մին տեղ տուր պառկելու. շուտով օղարկեց գիս Երուսղմ պտրց վաճքն և կերակուր ևս թային արաւ. հտոյ Կր ոսկի ևս ետուր շորեք շինելու և շինեցին լաթինացոց ձևն. ըուրքէթիս մէտլին միայն ԾԵ տուգաթ է: Եւ յորժամ շորերն եղև, հազայ և գնացի առ թագաւոր. մին կէտ ժամու չափ հեռս խօսեցաւ ինձ համար. ինձ համար աղօթք արայ. և մին պակասութիւն ունիս ինձ ծանոյ ասելով ուրախ գիժօք. և ևս յունվարի առաջի օրն թատէտ լաւտամօ կարդացին ճիգուիթի եկեղեցին պատրիարքն.

1. Տես մեր ծանօթութիւնը Բազմովկայ 1922, ք. 8, էջ 94.

Թզւրն և Թագուհին մեծամեծ ալայով. ևս վեց ձիով կառօցա եկաւ սարայէն. ելա զնացի. նայե եպիֆանի՛ է՛ին ևս զնացի Թագաւորին զափէլն մեծ օֆիցիթօն արարին. այս այսպէս. . .

1721. Թուին յունվարի 10  
Ալիզպանայ քաղաքի

Տէր Զարութիւն  
Եպիսկոպոս, գրեցաւ

ԻԳ.

Նոյնը կրնանք բնել հետեւեալ Թղթոյ նամակագրին համար, որ մինչ տեղեկու-  
թիւններ կը հաղորդէ Գրանսիրուանիոյ Հայոց ազգային գործերուն և եկեղեցական  
սովորոյթներուն շուրջ՝ կու տայ նաև այդ ժամանակի իր գործունէութեան ալ մէկ  
պարագան, ինչ որ այլուր յիշատակուած չենք գտներ:

Վերապատուեցեալ Տեառն Մխիթարայ Աբբայի  
և Աստուածաբանութեան Վարդապետի

Յայտ առնեմ տէրութեան քում, զի զգիրն որ գրեալ էիր Անիսի քսանն, առնկալայ,  
և վասն գրոյն զոր յղեցին ի Հռոմ և ինդրեցին Միսոնար ի սուրբ ժողովէն, կարի քաջ  
տեղեկ եմ և ոչ է ընդդէմ մեր: Իսկ զայն որ ես գրեցի, այնու գրովն ծանուցի սրբոյ  
ժողովոյն թէ յոյժ հարկավոր է առաքումն Միսոնարի ի Գրանսիրվանիայ ի մէջ հայոց,  
վասն լեզուի՛ն՝ լատինականի, որ ընդ Եպիսկոպոսին լաղինի բերան առ բերան խօսելով  
լինի բազում օգուտ պարզամիտ ժողովրդեանն, և այլն:

... վասն Երնդեան պահոցն ծանիք, զի է հաստատուն և կամին ամենեքին պահել յօժա-  
րութեամբ, սակայն հին սովորութիւնն ոչ բառնի առժամայն, այլ սակաւ սակաւ տեսանե-  
լով և լսելով ընտելանան շնորհիւ Տեառն, վասն զի են յօժարամիտք առ օգուտակրօսն: . . .

Դճանիր ևս, Սուրբ ժողովն որ գրեալ էր մաճարու Եպիսկոպոսին թէ. Ընդէր Թոյլ  
տաս որ տէր Մինասն խարնակէ զպահն Հայոց, ըստ սովորութեան եկեղեցւոյն իւրեանց  
գոր ունին. որովհետեւ են միացեալք հաւատով ընդ մեզ. և այլն: Զօրութեամբ նոյն  
գրոյն կոչեաց զչորս Եկեղեցւոյն զգլխաւորսն Հայոց. ընդ նոսին և զտէր Մինասն. կա-  
մեցաւ զի և ես լինիցիմ անդ ներկայ և ապա առաջի ամենեցուն արար քննութիւն վարուց  
և արարմանց Տէր Մինասին. և եզիտ այնպէս, որպէս ամբաստանեցեալն էր ի Հռոմ.  
և յետ ստուգելոյ, էառ զՎիզիտադորութեան և Վիզարութեան զգիրն, զոր տուեալ էր.  
և այսպէս լռեցոյց զնա տակելով. թէ ուրեմն պատրեցեալ իմ ի բանից քով և իտփեցեալ.  
գոր եթէ ճանաչէի գրեզ նախ, որպէս այժմ ճանաչեցի, ոչ երբէք տայի քեզ իշխա-  
նութիւն, վասն զի աժօթ արարեր ինձ, և այլն: Եւ զկնի այսոցիք է՛հարց իշխանացն հայոց,  
թէ զով կամիք՝ զի արարից Վիզար ի վերայ ձեր, որ կարաւարեցէ զձեզ. ամենեքին  
միբրան ստացին. թէ կամիք տալ զՎիզարութիւնն Գեր. Յօնան Եպիսկոպոսին: Իբրև  
լուաւ, առժամայն մատոյց զՎիզարութիւնն Մեզ. արդ ես նախ շնորհակալ եղէ, և ապա  
պատճառանօք հիւանդութեան և չգիտելով զլաղինի լեզուն, հրաժարեցայ տակելով, թէ  
Սուրբ ժողովն Միսոնար առաքելոց է աստ. նմա վայելէ այս գործակալութիւնս: . . .

գրեցաւ 1721 ի Կելէ  
Ունիսի 16

Յօնան Եղիա Եպս. Սեպաստեայ

1. Յայանութիւն Քրիստոսի:

Ի Դ .

Թուղթիս ստորագրողը Յ. Ա. Արնգոս. պէտք է որ ըլլայ Լէոպոլտայ Թովհաննէս Աւգոստինովիչ արքեպիսկոպոսը: Իր վրայօր միակ և որոշ ծանօթութիւն մը կու տայ մեզ իր իսկ մէկ փոքր պաշտօնաթուղթը (Հ. Ալիշան « Կոմիտէից » էջ 199), ուր եղած ակնարկները կու գան նաև հաստատել մեր հրատարակած նամակին բովանդակութիւնը: Սոյն թուղթը այսպէս կը սկսի.

« Բովհաննէս Տօբիայ Ավկուադինովիչ՝ Աստուծոյ և առաքիւկական աթոռոյն (չը. « Նորհիւ) արհիեպիսկոպոս Լէօբոլտի, և ընդ բոլոր Թազաւորութեանն Լեհաց և « մեծի զքառութեան Լիթուանիոյ, Հայոց եպիսկոպոս Մոլտավիոյ նոյն ազգին Հայոց, « սրբազան Փափին մերոյ Իրեւազ ընտանի և Արշիթերակայ. յորմէ հետէ աստուա. « ծային գթութեամբ յարհիական աստիճան բարձրացաք. զբարեկարգութենէ եկեղե. « ցնացս մերոց բունն արկանէաք... » և այլն:

Բովհաննէս արքեպս.ի անունը ծանօթ է նաև Գալեմքեարեանի « Կենսագրու. Թիւննէր և Ի կու հայ պատրիարքն Երու... » անուն հատորիկին. (Վիլենա 1915. էջ 180):

Գեապոյժաւ և Ամենպատուելի Տէր Աբրահայր  
Եղբայր իմ ի Գրիստոս Սիրելի

Ընկալայ զթուղթն ի Ք. և Ա. Տէրութենէ, զոր բերեաց ինձ մի ուխտաւոր Հայոց: Լի եղև սիրտ իմ ուրախութեամբ լսելով վասն առողջութեան Գեապոյժաւորութեան, մանաւանդ զի ժամ և եկեղեցի աշխատմամբ Տէրութեան զեղեցկապէս կատարեցաւ ի փառս Աստուծոյ:...

Աստուծոյ գոհութիւն, զի մեր մէջ Թազաւորութեան խաղաղութիւն է, և էս, ընդ մեր Գահանայից և ժողովրդեան ստողջ ճամբ: Մեծաւոր Բրէվէթը Գարատան Փափին ի Լէօպոլիս մեր Ազրին, Գէազին մեռաւ, այժմ նորա տեղ ընտրեաց զմեծ իմ բարեկամ, Թէ գայցէ ի Լէօպոլիս, զբազէր Բատանասքի, կարծեմ Թէ յայտմ ժամանակի լինի ի Վենետիկ, լաւ և իմաստուն մարդ էս ինչպէս զմեզ վասն նորա, և զրեցի առ Սուրբ ժողով. ունիմք այժմ խաղաղութիւն:...

Կանուցանեմ Տէրութեան, զի սեր Տօնացոյց, ըստ իմոյ դիտաւորութեան այժմ սրբարի ի Հոսօ, ըստ Ամսոց, ինչպէս օրինակ տուի սրբոյ ժողովոյն: Զայն հինք պաս, այսինքն Սրբոյ Հոգոյն, Ալլակերպութեան, Սուրբ Խաչի ի Վառախաշ, Սրբոյն Յակոբայ և Սարկիսի՝ Ս. Փափն այժմ, առ ի ինչորուածս մեր վերացոյց, զի ոչ պահիցեմք, զի ծանր յոյժ է գայքան պաղս պահել, և խոստացաւ զմեր Տօնացոյց ստամբել՝ իւր խարճով ի Վենետիկ:...

Այժմ ճամբ և միշտ անփոփոխելի և ճշմարիտ Գեապոյժաւորութեան

Բարեկամ և եղբայր

Ի Լէօպոլիս 1723  
Մայիսի ԺԿ.  
(Շարունակելի)

Յ(ովհաննէս). Աւգոստինովիչ). Արնգոս Լեհաց Երկրի Հայոց

Հ. Գ. ՏԱՅԵԱՆ



- 1. stampare = տպագրել
- 2. Ս. Գաբրու. եկեղեցիի կ'ակնարկէ.